



ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԱՎԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ



Գարեգին վարդապետ Հովսեփյանը հորս վաղեմի բարեկամն էր: 1912 թվականի աշնան ես զայն ճանչցա առաջին անգամ Կոստանդնուպոլսո մեջ, երբ հորս հետ այցելութեան դացիներ իրեն Բերա, Սաղըզ Աղաճ, Լարի փողոցի պանսիոնը, ուր իջևանած էր իր էջմիածնական ընկերներուն՝ Կոմիտասի և Տիկարիչների Փանոս Թերլեմեզյանի ու Կղիշե Թաղեոսյանի մոտ:

Գարեգին վարդապետ Հովսեփյանի Կոստանդնուպոլսո այցելութեան նպատակները երկուք էին. առաջինը՝ իր մասնագիտական կուռ պաշարով հայ մանրանկարչական դաշավոր արվեստը շարք մը դասախոսութիւններով պոլսահայութեան ծանոթացնել, և երկրորդը՝ անձամբ ուսումնասիրել և պրըպրտել հին ձեռագրեր, որոնք կգտնվեին Կոստանդնուպոլսո՝ Օրթոքսոլի Անտոնյան միաբանութեան մատենադարանին և Ղալաթիո Ս. Լուսավորիչ ազգային մատենադարանին մեջ:

Այդ օրերուն երջանիկ առիթներ չպակսելու թե՛ ծնողական տանս, թե՛ մտավորական լայն շրջանակներու մեջ զինքը մոտեն ճանչնալու իր ամբողջ էութեամբ: Անոր ծայրահեղ համեստութիւնը, բարեհամբույր, զվարթ բնավորութիւնը և ամենուն հանդեպ ցույց տված սիրալիրութիւնը գրավեցին բոլորին սրտերը: Քանի մը շաբաթվան մեջ անոր տված շարք մը դասախոսութիւնները գրավեցին պոլսահայ մտավորականութեան սերն ու հարգանքը: Պոլսահայ մամուլը բարձրորեն դրվատեց անոր դասախոսութիւններուն մեծ արժեքը և իր սյունակներուն մեջ զետեղեց անոր գիտական մեծ պաշարի մասին ընդարձակ հոդվածներ: Պոլ-

սահայ մտավորականութիւնը մեծ հարգանքով շրջապատեց իր հչուր մեծ գիտնականը, զայն անվանելով պատմաբան, բանասեր և փրիսոփա: Գարեգին վարդապետ Հովսեփյանի հեղինակութիւնները թանկարժեք գործերու նման փնտրվեցան պոլսահայ մտավորականութեան կողմէ: Ժողովուրդը գուրգուրանքով շրջապատեց զայն:

Գարեգին վարդապետը, բացի Պերայի Յունիոն Ֆրանսեզի սրահին մեջ տված երեք դասախոսութիւններէն, Կոստանդնուպոլսո մոտ կամ հեռավոր հայաշատ կեդրոններուն մեջ ալ դասախոսեց: Այդ օրերուն պոլսահայութեան միակ տենչանքն էր մոտեն լսել և տեսնել հայրենի քաղցր հիշատակներով սրբացած Գարեգին հայր սուրբը:

Կարժե այստեղ հիշատակել Գարեգին վարդապետի առաջին դասախոսութիւնը: Աննկարագրելի էր Պերայի Յունիոն Ֆրանսեզի ընդարձակ համերգային դահլիճի ներքին և արտաքին միջանցքներուն մեջ հավաքված ժողովուրդի տեսքը: Որոշյալ ժամուն, որտունդոստ ծափահարութեան մեջ բեմի վրա երեցավ դասախոս Գարեգին վարդապետը: Հակառակ անոր վտիտ և նիհար երևույթին, ապավորիչ էր ան իր սեփ-սև սքեմին մեջ և արտահայտիչ՝ իր խոսքով: Բեմի վրա զետեղված մոդական լապտերի միջոցով իրարու ետևե կդիտեինք հայրենի դաշավոր հիշատակարաններու լուսանկարներ՝ մազադաթներ, խաչքարեր, խոյակներ, հայտնի թագավորներու և թագուհիներու դիմանկարներ. անոնցմէ շատերը լուսանկարված էին Գարեգին վարդապետի կողմէ, իսկ գունանկարված՝ նկարիչ Եղիշե Թաղեոսյանի կողմէ:

Մեծ էր ներկաներուն հետաքրքրութիւնը. մոդական լապտերի վրա ցուցադրված ամեն



պատկեր, հմտալից և կուռ բացատրութիւններով կամբողջացնեն գիտնական Գարեգին հայր սուրբին դասախոսութեան նպատակը: Կարելի՞ է արդո՞ւր մոռնալ Պերայի Յունիոն Յրանսեզի մեջ տեղի ունեցած առաջին դասախոսութեան վերջավորութիւնը... Հայր սուրբը կանգնած հայրենի Մասիսի դարավոր պատկերին առջև, որ շքեղորեն նկարված էր իր հարազատ գուլնեղով, Արարատյան անծայրածիր դաշտերու վրա տիրող իր վեհութեան մեջ:

Ահա տասնյակ տարիներ վերջն ալ նվիրականութեամբ կվերհիշեմ իր այդ առաջին դասախոսութեան վերջին խոսքը՝ «Մասիսը հայ ժողովրդի հավատքը, հույսը և փառքն է»: Այս վերջաբանի ներշնչած հուզումը վարարեց ներկաներուն սրտերը և դասախոսութիւնը վերջացավ փոթորկալից ծափերու որոտին տակ:

Գարեգին Սրբազանին հետ իմ երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ 1925 թվականի աշնան, Սուրբ Էջմիածնի մյուստնօրհնութեան եռօրյա հանդեսներուն: Այդ օրերուն, իբրև իր վաղեմի բարեկամին դուստրը, ես հյուրընկալվեցա Գարեգին Սրբազանի բնակարանը, ուր առաջին անգամ ծանոթացա հայ մտավորական ավագանիին խումբի մը՝ Լեո, Մանուկ Աբեղյան, Երվանդ Շահազիզ, Ստեփան Մալխասյան, Ստեփան Կանայան, Գ. Էմին, բժշկապետ Համբարձում Քեչեկ և ուրիշներ: Այդ օրերը անցան ջերմ և մտերմական մթնոլորտի մեջ, որուն առանցքը կազմեց Գարեգին Սրբազանը իր հյուրասեր, զվարթ, կատակասեր բնավորութեամբ: Այդ օրերուն Գարեգին Արքեպիսկոպոսի առջնորդութեամբ այցելեցինք Էջմիածնա թանգարանը, մատենադարանը, Էջմիածնա հուշարձանները՝ Հոփսիմե, Գայանե, Շողակաթ և Զվարթնոց: Այդ անմոռանալի այցելութեան վերջին հիշատակը եղավ Գարեգին Արքեպիսկոպոսի ինձ նվիրած իր երկու հեղինակութիւնները՝ առաջինը՝ «Հնարհիտական քարտեզ», երկրորդը՝ «Թոմա Մոծոփեցու կյանքը»: Այս երկու մատյաններն ալ կմնան մոտս իբրև Մեծի Տանն Կիլիկիո

Աթոռի վախճանյալ Վեհափառ Կաթողիկոս Գարեգին Ա.ի մակագրած հիշատակները:

1945 թվականի աշնան Գարեգին Ա. Կաթողիկոսը Էջմիածին եկած էր կաթողիկոսական ընտրութեան առիթով: Այդ օրերուն թե՛ Էջմիածնա Վեհարանի, թե՛ Իրևանի «Խնտուրիստ» հյուրանոցի մեջ, որ իր մնայուն բնակութեան տեղը եղավ, երջանիկ առիթներ շատ ներկայացան կրկին և կրկին վայելելու ծերունագարդ գիտնականի ներկայութիւնը: Ան, հակառակ իր հառաջացած տարիքին և իր արտաքին հիվանդագին վիճակին, երիտասարդի նման առողջ իմացականութիւն և սուր հիշողութիւն ունէր: Երանութեամբ հիշեց Կոստանդնուպոլսո մեր տան մեջ իր անցուցած մեր ընտանեկան պտույտները, Վոսփորի և կղզիներու վրա մեր կատարած շոգենավային զբոսանքները, Կոմիտասի և նկարիչներ Փանոս Թերլեմեզյանի և Եղիշե Թադեոսյանի հետ Կոստանդնուպոլսո ամեն հնագիտական, պատմական վայրերը շրջելը: Հաճախ արտասուլից հիշատակեց այն պուսահայ մտավորականները, որոնցմե շատերը իր ընկերներն էին և 1915 թվականին թյուրք յաթաղանին զոհ էին գացեր:

Ծերունագարդ գիտնականը իր հարաձուռ ավյունով երկար օրեր տքնաջան աշխատեցավ մեր հայրենի մատենադարանի՝ իր կարոտալի ձեռագրերու բաժնին մեջ:

Գարեգին Ա. Կաթողիկոսի՝ հայ մեծ գիտնականի անունը հավերժորեն կապվեցավ հայ մանրանկարչական դարավոր արվեստին հետ, որուն լուսաբանման համար ան զոհաբերեց իր ամբողջ կյանքը: Գարեգին Կաթողիկոսը եղավ այն անխոնջ մշակը, որ իր բազմաթիվ աշխատասիրութիւններով առհավետ պիտի ապրի իր ժողովուրդի զավակներու սրտերուն մեջ: Ան եղավ այն երջանիկ հայ մեծ գիտնականը, որ իր ողջութեան, իր սիրելի նորակերտ Սովետական Հայրենիքին մեջ կանգնեց իր ձեռակերտ հավերժական հուշարձանը:

Փա՛ղք իր անմահ հիշատակին:

